ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0025 ք Երևան, Նալբանդյան 130, գործավարություն, հեռ. 596-125

№ _____ **«_____»_____2023թ.**

Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախագահ
Շուշան Դոյդոյանին

Ի պատասխան Ձեր հարցման ներկայացվում են հետևյալ դիտարկումները.

- 1-ին հարցի վերաբերյալ տեղեկացնում եմ, որ ՀՀ ներքին գործերի նախարարի 12.09.2023 թվականի թիվ 813-Ա հրամանով ներքին գործերի նախարարության և ենթակա մարմինների ծառայողներին (աշխատողներին) որակյալ աշխատանքի կատարման համար հատկացվել են պարգևատրում:

- 2-րդ հարցի վերաբերյալ՝ ՀՀ ՆԳ նախարարի վերը նշված հրամանով պարգևատրում է հատկացվել ՀՀ ներքին գործերի նախարարության և ենթակա մարմինների ծառայողներին (աշխատողներին) որակյալ աշխատանքի կատարման համար՝ յուրաքանչյուրին 150 000 (մեկ հարյուր հիսուն հազար) դրամ գումարով, բայց ոչ ավելի քան մեկ պաշտոնային դրույքաչափը: Պարգևատրման համար հիմք է հանդիսացել «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի 22-րդ հոդվածի 9-րդ մասը: **Այն է, պետական ծառայողին պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող կամ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված համապատասխան լիազորություններով օժտված այլ պաշտոնատար անձը հատուկ առաջադրանքների և(կամ) որակյալ աշխատանքի կատարման համար պետական ծառայողներին կարող է պարգևատրել աշխատավարձի ֆոնդի տնտեսված միջոցներից և (կամ) օրենքով չարգելված այլ աղբյուրներից:**

- 3-րդ հարցի վերաբերյալ պահանջվող տեղեկատվությունը գաղտնագրման ենթակա տեղեկատվություն է (հիմք՝ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մաս, «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ, ՀՀ կառավարության գաղտնի որոշումը ոստիկանության զորքերի թվաքանակի վերաբերյալ, ՀՀ ոստիկանության պետի 27.10.2020թ. թիվ 11-Ն հրամանի 23-րդ կետ):

Հարգանքով՝ ***Ա.Ֆիդանյան***

Կատարող՝ ՀՀ ՆԳՆ ոստ. ՖԲՎ
ԲՊԿ բաժնի գլխավոր մասնագետ
Ռուզաննա Սարգսյան, հեռախոս (010) 59-63-18